

Յակոբոս 5:1-6 (James 5:1-6)

«Մղել Բարի Վարմունքի»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 10.20.02

Կարդանք Յակոբոս 5:1-6 համարները: Այս առաւօտ պիտի մտածենք թէ ո՞ր մէկ բանը մեզ կը մղէ, ին՞չ է ամէնէն կարեւոր հարցը մեր կեանքին մէջ: Յակոբոս մեզի 2 ազդարարութիւն կուտայ ցուցունելով թէ որ մէկ բանը մեզ կը մղէ:

Առաջինը կը տեսնենք 1էն 3 համարներուն մէջ *«Աղէ հիմա, հարուստներ, լացէ՛ք, ողբացէ՛ք ան թշուառութիւններուն համար որոնք ձեր վրայ պիտի գան: Ձեր հարստութիւնը ապականած է ու ձեր հանդերձները ցեցի կերակուր եղած: Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած են եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս: Վերջին օրերուն համար գանձ դիզեցի՛ք»:*

Մանուկ մը աւագով բերդ մը կը շինէ ծովեզերքը, պատերով եւ աշտարակով: Մենք ալ բերդեր կը շինենք վագֆով, աշխատանքով. վասն ին՞չի, ջուրը կուգայ եւ ամէն բան կաւրէ. մեր բերդը կը կորսուի:

Երբ հարստութիւնը մեզ լման կը գրաւէ, անկումը անխուսափելի է: Հարստութիւնը ցնորք մընէ: Մեզ կերպով մը կը խաբէ, կը վստահինք անոր խորհելով թէ մենք տէր ու տիրական ենք մեր կեանքին: Բայց մեր կեանքը ժամանակաւոր է: Աստուած պիտի դատէ մեր գործերը:

Յակոբոս մեզ կ'ազդարարէ որ այս աշխարհի գրաւիչ բաներով չտարուինք:

Երկրորդ, Յակոբոս մեզ կ'ազդարարէ թէ այն բաները որ մեզ կը մղեն զանազան գործերու, կրնան ուրիշներու ազդել: 4րդ համարէն *«Ահա ձեր արտերը հնձող բանուորներուն վարձքը որ ետ պահեցի՛ք կ'աղաղակէ ու հնձողներուն բողոքը գօրութեան Տէրոջը ականջներուն հասաւ: Երկրին վրայ փափկութեամբ եւ հեշտութեամբ ապրեցա՛ք, արտերնիդ սնուցանեցի՛ք՝ որպէս թէ մորթուելու օրուան համար: Դատապարտեցի՛ք ու ըսպաննեցի՛ք արդարը, որ ձեզի հակառակ չկենայ:»*

Յակորոսի օրերուն 5 տարբեր խումբեր կային: Ստրուկներ, ագարակապաններ, վանառականներ, այս բոլորին վրայ կային հողատերեր եւ ֆահանաներ: Այս հողատերերը ունէին մեծ հողամասեր եւ կապրէին Երուսաղէմի մէջ մեծ հանոյփով:

Միայն իրեճմով կը գրադէին: Ամէն կերպ կը գործածէին որպէսզի ամբարէին հարստութիւն: Կը խարէին իրենճ գործաւորները: Կը գողնային ուրիշներու հողերը: Որպէս արդիւնճ շատեր սովամահ կըլլային:

Յակորոս այս խումբին կ'ուղղէ իր խօսքը: Երբ անճ մը կամբարէ մեծ հարստութիւն շահագործելով ուրիշներ, մեղք կը գործէ Աստուծոյ առջեւ:

Մենք կրնանք ըսել թէ այս նիւթը մեզի համար չէ'. բայց լաւ է որ մենք ինքզինքնիս ֆննենք:

Վերջերս կարդացի Eugene Oregonի մէջ պատահած auctionի մը մասին. մարդիկ կրնային տալ գին մը safe deposit boxերու վրայ: Այս մետաղէ safe deposit boxերը ունէին առարկաներ որ իրենց տէրերը ապահոված էին տարիներ առաջ գիտնալով որ անոնք արժեքաւոր էին: Այս տէրերը մեռած էին, եւ սնտուկներուն մէջէն ելան հետեւեալները՝ film որ չէր գործածուած, նկարներ, թերթի կտորներ, տոմսակներ՝ շոքեկառփի, ոսկեղէն, եւայլն:

Երբ սոյն հատուածը կը կարդայի, յեշեցի մեր garageները, պահարանները - արդիօք ինչո՞վ լեցուն են: Մենք ինչ՞ կը կուտակենք: Արդիօք ինչ՞ է որ մեզ կը մղէ. մեր կեանքը ինչի՞ կը նուիրենք:

Աստուած ամէն մէկուս կուտայ կարողութիւն, տաղանդ, ճիրք որպէսզի կարենանք իրեն ծառայել: Երբ իր կամքը կը կատարենք կ'օրհնուինք. երբ միայն մեր անճին կը ծառայենք կը վնասենք: Արդիօք մեր կեանքով կը գրաւե՞նք բարեկամներ որ Տիրոջ գան. արդիօք հակառակն ալ կը պատահի:

Աղօթք:

Սիրելի Երկնաւոր Հայր օգնէ մեզի որ գիտնանք թէ ին՞չ բանն է էն կարելորը քու քովդ: Գիտնանք թէ ին՞չ է Քու կամքդ: Օգնէ մեզի որ ծառայենք քեզի երբ Քու օրհնութիւններդ կը վայելենք: Թող տեսնենք մեր կարողութիւնները եւ կարենանք շատեր քեզի բերել: Յիսուսի անունով՝ Ամէն: